

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Ինչպես վերնագիրը ցոյց կու տայ, Հայաստանի Հանրապետության պատմությունը, իբրև պետության մը զարգացման, յարաբերություններու եւ իրագործումներու ժամանակագրական պատկեր, մաս չի կազմեր մեր նիւթին: Հանրապետության կեանքի հոլովոյթը հոս տեղ կը գտնէ այն չափով միայն՝ ինչ չափով որ ուղղակիօրէն կ'առնչուի Դաշնակցութեան գործունէութեան հետ¹⁾:

Բայց այդ առնչութիւնը պարագայական չէ, այլ մնայուն կերպով ներկայ՝ այլազան մարգերու մէջ եւ զանազան մակարդակներու վրայ: Այն աստիճան՝ որ եթէ ճիշդ չէ ըսել որ Հայաստանի անկախ Հանրապետութեան պատմութիւնը կը նոյնանայ Դաշնակցութեան 1918-1921 տարիներու պատմութեան հետ, — քանի ի վերջոյ տարբեր բաներ են պետութիւն եւ կուսակցութիւն—, այլ անվարան հաստատելի է որ անոնք երկկողմանի եւ անմիջական կախման մէջ են՝ Հ. Յ. Դաշնակցութեան այդ տարիներու ամբողջ գործունէութիւնը մեկնելով բացառապէս հայկական անկախ պետութիւն կերտելու հրամայականներէն: Հակառակ Մեծ Եղեռնէն իր կրած ահաւոր հարուածին, Դաշնակցութիւնը իրօք որ հանդիսացաւ այն միակ *ռէալ ոյժը*՝ որ, 1917-18ի գերագոյն գոյամարտին թէ Հանրապետութեան կեանքի երկու-երեք տարիներուն ընթացքին, տոկալու վեռականութիւն, ընկերային արդարութիւն եւ ազգային առողջ մթնոլորտ ներշնչեց հայութեան մնացորդացին եւ անոր նորագատ հայրենիքին: Այդ ամբողջ ժամանակաշրջանին, ան ոչ միայն գործեց իբրև էապէս քաղաքական, խորհրդարանական, փաստօրէն նաեւ կառավարական կուսակցութիւն, այլեւ կրցաւ անվար պահել իր յեղափոխական-մարտական աւանդները՝ զանոնք ի սպաս դնելու համար հայ պետականութեան ամրապնդման եւ երկրի հայեցի դիմագծութեան բիրեղացման:

1) Դաշնակցութիւնը՝ իբրև Հանրապետութեան պետական եւ քաղաքական կեանքի ղեկավար կուսակցութիւն.— Հ. Յ. Դաշնակցութիւնը տիրական ներկայութիւն արձանագրեց Հայաստանի Հանրապետութեան կեանքին մէջ՝ գործադիր թէ օրէնսդիր իշխանութեանց զուգահեռ մակարդակներուն վրայ: Անկախ Հայաստանի յաջորդական չորս վարչապետները եղան դաշնակցականներ՝ որոնք կազմեցին, ըստ պարագայի, գրեթէ զուտ դաշնակցական կամ խառն (*քոալիտիոնի*) դաշինքներ: Առաջինը՝ Յովհաննէս Քաջազնունի, որ պետութեան թիւ 1 մարդը եղաւ անկախութեան յայտարարութենէն մինչեւ 1919 Ապրիլ²⁾: Ապա՝ Թիֆլիսի նախկին քաղաքապետ Ալեքսանդր Նատիսեան, որ կառավարութեան նախագահեց մինչեւ 1920 Մայիսի սկիզբը³⁾: այդ թուականին, աւելի ազդու եւ արմատական կերպով գսպելու համար երկրին մէջ ծայր տուած պոլշեիկեան թէ թուրք-թաթարական ըմբոստութիւնները, կեանքի կոչուեցաւ Համօ Օհանջանեանի կառավարութիւնը՝ կազմուած Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամներէն⁴⁾: Վերջապէս, անկախ Հայաստանի վերջին վարչապետը եղաւ Բիւրոյի անդամ Սիմոն Վրացեան, որ այդ պաշտօնը վարեց իր նշանակումէն (23 Նոյեմբեր 1920) մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը (2 Դեկտեմբեր)⁵⁾:

Հայաստանի օրէնսդրական անդրամիկ մարմինը, Հայաստանի Խորհուրդի քաղկացուցիչ հատուածներու ներկայացուցիչներու թիւերուն եռապատկումով եւ որոշ յաւելումներով: Ան կը հաշուէր 13 դաշնակցականներ, 6 սոցիալիստ-յեղափոխականներ, 6 սոցիալ-դեմոկրատներ, 6 իսլամներ, 2 անկուսակցականներ, 1 եզդի-տի եւ 1 ռուս⁶⁾: Համեմատութիւն մը՝ որ ոչինչով կը համապատասխանէր Հայաստանի իրականութեան, ուր Տ.Ր.ները, սոց.-դեմոկրատներն ու ժողովրդականները, հաւանաբար, շատ հեռու էին Դաշնակցութեան եւ անոր համակիրներու զանգուածին հաւասարելէ: Եւ իրօք, երբ 1919ի Յունիսի վերջերը տեղի ունեցան համաժողովրդական ֆուտարկութեամբ խորհրդարանական ընտրութիւնները, Հայաստանի Խորհրդարանը, 80 հոգիի վրայ, հաշուեց 72 դաշնակցականներ, 4 սոց.-յեղափոխականներ, 3 թաթար-

ներ եւ 1 «անկախ գիւղացի» (նախատեսելով այսպիսի արդիւնք մը, սոց.-դեմոկրատներն ու ժողովրդականները նախընտրած էին պոլշեիկեանները)⁷⁾:

Այսպէս, զանազան մակարդակներու վրայ, դաշնակցական ղեկավար դեմքեր ու գործիչներ անդուլ տփնեցան՝ նորաստեղծ հայրենիքը հետզհետէ դուրս բերելու համար «անձեւ քառս»⁸⁾, տալու համար անոր՝ ժողովրդավարական կառոյց, ընկերվարական ըմբռնումով ընկերային եւ տնտեսական կարգուսարք, այլ մանաւանդ հայեցի դիմագիծ, ազգային միութիւն եւ պետական արժանաւորութիւն. եւ արտաքին-յարաբերական գետնի վրայ, ապահովելու համար անոր՝ միջազգային ճանաչում եւ անհրաժեշտ օժանդակութիւններ⁹⁾: Կարելի չէ ըսել, անշուշտ, որ իրենց պետական ու դիւանագիտական քաղաքական նախաձեռնութեանց մէջ միշտ յաջող դուրս եկան նորաստեղծ Հանրապետութիւնը վարող վարչապետները, նախարարները, բարձրաստիճան պաշտօնատարներն ու քաղաքական ներկայացուցիչները, քանի երկիրը հիւժած էր, փոքր ու սկար, եւ թշնամիներով շրջապատուած, իսկ իրենք՝ պետական կեանքի մէջ տակաւին անփորձ. բայց ինչ որ ըրին՝ ըրին ազգային արժանապատուութեան բարձր գիտակցութեամբ, անշահախնդրութեամբ եւ ամբողջական նուիրումով¹⁰⁾:

Միշտ հեզասահ չընթացաւ նաեւ պետութեան ղեկավարման դրութիւնը՝ կուսակցական մարմիններու եւ օրէնսդիր ու գործադիր իշխանութեանց յանախ անխուսափելի հակադրութիւններուն ընդմէջէն: Եւ կառավարութեան թէ երկրի վարչամեքենային մաս կազմող դաշնակցականները երբեմն տարուրբերեցան յեղափոխական-արմատական գուտ դաշնակցական աւանդներուն եւ հանրային-ժողովրդավարական էապէս պետական հասկացողութիւններուն միջեւ¹¹⁾: Գերագոյն ղեկավարութիւնը ընդհանրապէս ունեցաւ սակայն անհրաժեշտ ողջմտութիւնը՝ այդ երկու մտայնութիւններուն միջեւ պահելու որոշ հաւասարակշռութիւն մը: 1920 Մայիսէն Նոյեմբեր ամիսներուն է միայն, Բիւրօ-կառավարութեան օրով՝ երբ հայրենիքի փրկութեան անմիջական հարց կար դրուած, որ պէտք եղաւ ժամանակաւորապէս ցրուել Խորհրդարանը, հաստատել կուսակցական տիրապետութիւնը եւ գործել մարտական-յեղափոխական եղանակներով:

Ազգային գաղափարախօսութեան եւ նպատակներու տեսակետէն, Հայաստանի Հանրապետութեան ժամանակաշրջանի հիմնական աւանդը եղաւ՝ Միացեալ (ազատ եւ անկախ) Հայաստանի տեսլականը: Ան առաջին անգամ արտայայտութիւն գտաւ 1919 Փետրուարին, Երեւան գումարուած Արեւմտահայոց Երկրորդ Համագումարի քաղաքական բանաձեւերուն մէջ, իբրև Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած հայապատկան շրջաններու վերստացումով՝ մէկ եւ ամբողջական Հայաստանի մը ստեղծման պահանջ-տրամադրութիւն¹²⁾: 1919 Մայիս 28ի իր պատմական յայտարարութեամբ, Հայաստանի կառավարութիւնը, վարչապետ Նատիսեանի բերնով, իւրացուց ժողովրդավար կառոյցով Միացեալ եւ Անկախ Հայաստանի առաջադրանքը՝ որ այնուհետեւ դարձաւ պետականօրէն հետապնդելի քաղաքական փլաթֆորմ¹³⁾: Վերջապէս, 1919 Սեպտեմբերին Երեւան գումարուած Հ. Յ. Դաշնակցութեան Իններորդ Ընդհանուր ժողովը իր կարգին պիտի որդեգրէր «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան»ի բանաձեւը՝ իբրև ծրագրային հիմնական նպատակակէտ¹⁴⁾:

2) Հ. Յ. Դաշնակցութեան մարտական նպատակը Հայաստանի Հանրապետութեան.— Չուր տեղը չէր, որ Հ. Յ. Դաշնակցութեան Իններորդ Ընդհանուր ժողովը (Երեւան, Սեպտեմբեր-Նոյեմբեր 1919) կը յանգէր հետեւեալ եզրակացութեան.— «... Ընդհ. ժողովը հարկ է համարում շեշտել, որ ներկայումս Հայաստանը ապրում է գերազանցօրէն յեղափոխական ժամանակաշրջան, եւ այդ պատճառով կառավարութիւնը... հարկը պահանջած ժամանակ պէտք է դիմէ բացայայտ յեղափոխական միջոցներին»¹⁵⁾:

Արդարեւ, 1917-18ի անկախութեան պատերազմի օրերէն սկսած եւ անընդհատաբար, Հայաստանի հողին վրայ թուրք-

թաթարական ըմբոստութիւններն ու ասպատակութիւնները — եւ անոնց զսպումը — հայկական բանակին թէ դաշնակցական մարմիններու եւ զինեալ ուժերու առօրեայ մտահոգութեան առարկան կազմեցին: 1919ի կէսերէն ետք՝ անոնց վրայ եկան աւելնալ պոլշեիկեան խլրտումները, որոնք 1920 Մայիսին իրենց կարգին պիտի յանգէին զինեալ ըմբոստացման շարժումներու՝ Կարսի, Իջեւանի եւ յատկապէս Ալեքսանդրապոլի շրջաններուն մէջ: Հակառակ Մուստաֆայի դաշնագրի տրամադրութիւններուն, տակաւին 1919-1920ին թուրքերը կը շարունակէին իրենցը նկատելի Կարսի ամրոցը մարզը, իսկ անոնց ցեղակից ազերի թաթարները՝ Շարուրն ու Նախիջեւանը, Ղարաբաղը, Պորչալուն, Լեռնային Գանձակը, նոյնիսկ գրեթէ ամբողջովին հայաբնակ Ջանգեզուրը¹⁶⁾: Անոնց մերժումի կեցուածքն ու յարձակողական ախորժակները մասամբ ու երբեմն միայն կը զսպուէին Անդրկովկասի անգլիական հսկիչ ուժերուն կողմէ, որոնք յաճախ կը դիրքորոշուէին ի նպաստ երէկի իրենց թշնամիներուն¹⁷⁾: Երեւանի շատ մօտ, Վեդիքասարի, Ջանգիքասարի եւ Դարալագեագի թուրք-թաթար բնակիչները ըմբոստութեան մնայուն վիճակի մէջ էին Հայաստանի իշխանութեան դէմ¹⁸⁾:

Տակաւին 1918ի մեծ նահանջի օրերուն, դաշնակցական զինեալ զունդերը, փորձուած խմբապետներու ղեկավարութեամբ¹⁹⁾, հիմնական դեր ունեցած էին ոչ միայն արեւմտահայ գաղթականութեան Անդրկովկաս փոխադրութեան, այլեւ նախնա ընթացքին անգէն ժողովուրդը կողոպտող ու կոտորող թուրք եւ ֆիւրս չէթէներու շեղակցման գծով: 1918 Մայիսի սկիզբը, Տարոնի եւ Սասնոյ 70-000ի հասնող մնացորդացը կը տուայտէր տակաւին Սարդարապատի շրջանին մէջ: Արագածի բարձունքներն ու ստորոտը բռնուած էին թաթար բնակչութեամբ, ինչ որ մնայուն սպառնալիք մը կը կազմէր հայկական բանակին թէ շրջապատի հայութեան համար: Յաջող արշաւանքով մը, Փեթարայ մանուկի եւ Մուշեղ Աւետիսեանի սասունցի, տարօնցի եւ խնուցի ուժերը 5 Մայիսին գրաւեցին Թալինի անառիկ նկատուած քերդը եւ Արագածի շրջանը պարպեցին թրքութենէ (1919ի գարնան, այնտեղ պիտի բնակեցուէր Տարոն-Տուրուքերանի գաղթական ժողովուրդը): Արագածի գրաւումը հայկական բանակի թիկունքը ապահով դարձուց²⁰⁾:

Անկախութեան օրերուն նաեւ, Սասնոյ եւ Տարոնի զինեալ զունդերը մասնակցեցան թուրք-թաթարական ասպատակութեանց զսպումին եւ էապէս նպաստեցին Հայաստանի հայութեան ապահովութեան եւ գաղթականներու տեղաւորման գործին: Անոնք մասնակցեցան Ջանգեզուրի պաշտպանութեան կռիւներուն, ընկնեցին Ադուտի եւ Բաշգեանիի թաթարական շրջանները, կոտեցան Դարալագեագի մէջ, ազատագրեցին Ջղնի Ջորն ու Միլիտէրէն: Անոնք ուղղակի կապի մէջ էին Ռուրէն Տէր Միւսաբեանի եւ ներքին նախարար Արամ Մանուկեանի հետ, եւ կը շարժէին անոնց ցուցմունքներով: Հիմնական եղաւ անոնց նպաստը՝ Հայաստանի Հանրապետութեան փաստացի հայացման տեսակէտէն²¹⁾:

Հիւսիսային Պարսկաստանի ռազմաճակատէն իր վերադարձին, Ջանգեզուր բնակեցուցան նաեւ Անդրամիկի գորագունդը, դառնալով շրջանի հայկական բանակը՝ որ ի դերեւ պիտի հանէր ազերիներու դաւերը այդ շրջանի իւրացման ուղղութեամբ²²⁾:

1920 Յունուար-Փետրուարին, խմբապետ Ղազար Գոչարեան իր գունդով պիտի լուծէր Ագուլիսի կոտորածին վրէժը, Գողթն գաւառին մէջ²³⁾:

Ջինուորական նոյնպիսի գործողութիւններ կատարեց նաեւ Հայաստանի բանակը, կառավարութեան որոշումով, փրկելու համար վտանգուած շրջաններու հայ բնակչութիւնը: Գնդապետ Արսէն Շահմազեան 1919 մարտին ղրկուեցաւ Ջանգեզուր: Նոյն տարուան Նոյեմբերին, հոն էր նաեւ սպայ Գարեգին Նժդեհ²⁴⁾: Ջոր. Յովսէփեանի ուժերը ընկնեցին Կարսի մարզի թուրք խռովարարները՝ 1920 Փետրուարին²⁵⁾: Դրոն, իր կարգին, ղեկավարեց թրքական ըմբոստութեանց զսպումի բանակային զանազան գործողութիւններ, եւ փրկեց Ղարաբաղի հայութիւնը բնաջնջման վտանգէն, իր գործառնով 1920 Ապրիլին փութալով այնտեղ եւ մնալով շուրջ 45 օր²⁶⁾:

Կարսի, Ալեքսանդրապոլի, Նոր Պայագիտի, Դիլիջանի եւ Իջեւանի շրջաններուն մէջ, պոլշեիկեան խլրտումները ասպատակութեան մը բնոյթը ստացան 1920 Մայիսի սկիզբը, երբ Ատրպէյնանը դարձած էր արդէն խորհրդային եւ պոլշեիկ-էմալական համաձայնութիւնը՝ բացայայտուած²⁷⁾: Հայրենիքը վտանգուած էր: Մայիս 5ին Խորհրդարանը մէկ ամիսով ցրուեցաւ եւ Հ.Յ.Դ. Բիւրոն, ամբողջական լիազօրութիւններով, ձեռք առաւ Հայաստանի իշխանութիւնը՝ զսպելու համար պոլշեիկեան եւ թուրք-

թաթարական ասպատակական համակարգուած շարժումները²⁸⁾: Ջորաշարժի ենթարկուեցան ոչ միայն բանակի օրինապահ մնացած միւտրները, այլեւ դաշնակցական զինեալ ուժերն ու բոլոր մարմինները: Կազմուեցան ժողովրդական միլիսներ²⁹⁾:

Պոլշեիկներ, սիրաշահելով բանակային կարգ մը միւտրներ, փաստօրէն տէր դարձած էին Ալեքսանդրապոլին եւ անոր կայարանին՝ ուր գնդ. Մուսայէլեան «Վարդան Ջորավար» գրահապատ գնացին վրայ բարձրացուցած էր ասպատակութեան դրօշը: Ան կազմեր էր «Հայաստանի Ռազմա-յեղափոխական Կոմիտէ» մը եւ Երեւանի կառավարութենէն կը պահանջէր բովանդակ իշխանութիւնը յանձնել իրեն³⁰⁾: Ի գուր անցան սպարապետ Նազարէգեանի, պատերազմական նախարարի եւ վարչապետի կոչերը Մուսայէլեանին՝ գրահապատ գնացը խաղաղութեամբ յանձնելու: Շրջանի օրինապահ ուժերու եւ միլիսներու ընդհանուր հրամանատար նշանակուեցաւ Սեպուհ: Արագածի շրջանէն դարձեալ իջան Սասունի մարտական ուժերը³¹⁾: Մայիս 13-14ին, բուռն կռիւներէ ետք, չէզոքացուեցաւ եւ գրաւուեցաւ գրահապատ գրնացը: Մայիս 14ին, գրեթէ առանց կռուի, Հանրապետութեան օրինապահ ուժերը մտան Ալեքսանդրապոլ, ուր կարգը դիւրաւ վերահաստատուեցաւ՝ քանի զգաստացան եւ դարձի եկան պոլշեիկեան շարժումներով խանդավառ բանակային ուժերը: Ջերբակալուեցան գնդ. Մուսայէլեան եւ «Ռազմա-յեղափոխական Կոմիտէ»ի անդամները, բացի Աւիս Նուրիջանեանէն որ յաջողեցաւ փախչիլ³²⁾:

Յաջորդող 8-10 օրերուն ընթացքին, զսպուեցան Կարսի, Կաղզուանի եւ Նոր Պայագիտի պոլշեիկեան շարժումները եւս³³⁾: Մայիս 21ին, Ղազախի կողմէն (Ատրպէյնան) անակնկալ յարձակումով մը, պոլշեիկները եւ թաթարները կը գրաւեն Իջեւանն ու Դիլիջանը, բայց շուտով ետ կը մղուին հայկական միլիսներուն կողմէ³⁴⁾: Յունիսին, երբ Դրոն իր գործառնով Ղարաբաղէն մեկնած էր արդէն, այդ շրջանի պոլշեիկեան ուժերը կ'արշաւեն Ջանգեզուր եւ կը գրաւեն Գորիսը³⁵⁾: Թուրք-պոլշեիկեան միացեալ դաւադրութիւնն էր որ կը շարունակուէր: Արեւելի շրջանին մէջ (հարաւային Ջանգեզուր), սպայ Գարեգին Նժդեհ անցաւ ժողովրդական շարժման գլուխը եւ կարճ ժամանակի մէջ ամբողջ Ջանգեզուրը ազատագրեց թուրք-պոլշեիկեան տիրապետութենէն³⁶⁾:

Պոլշեիկեան շարժումներու զսպումէն ետք, ստեղծուած խանդավառութեան մէջ Բիւրո-կառավարութիւնը ձեռնարկեց թուրք-թաթարական ասպատակ շրջաններու վերջնական հաշուեյարդարին: Հետզհետէ ընկնուեցան եւ Երեւանի ենթարկուեցան՝ Ջանգիքասարը, Կարսի նահանգի ածխահանքերու շրջանը, Կողբը, Պէոյիւք Վետին, Սեւանի արեւելեան ափերը եւ Շարուրը³⁷⁾: Սասունի եւ Վասպուրականի դաշնակցական ուժերն ու ժողովրդային միլիսները, բանակային միւտրներու կողմէն, կարեւոր դեր ունեցան ասպատակ այս շրջաններու ընկնման մէջ: Կողբի կռիւներուն ընթացքին նահատակուեցաւ Փեթարայ Մանուկը³⁸⁾:

3) Բագուի հերոսամարտը, — Քիչ գրուած է Համաշխարհային Առաջին Պատերազմի հերոսական այս դրուագին մասին, որ անուղղակիօրէն փութացուց Գեորգիանոսի պարտութիւնը՝ ուշացնելով անոր դաշնակից թուրք բանակին կողմէ Բագուի նախահորներու գրաւումը³⁹⁾: Բագուի վեցամսեայ պաշտպանութիւնը, գէթ իր սկզբնական փուլին մէջ, պատմական հազուադէպ արտայայտութիւններէն մէկը կը կազմէ դաշնակցական-պոլշեիկ զինակցութեան՝ թուրք թշնամիին դէմ: Ան նաեւ՝ «հազարն նշանակուած թիւն ունեցաւ նրա [Հայաստանի] ճակատագրի համար. առանց Բագուի՝ Հայաստանի դէպքերը կարող էին բոլորովին այլ ընթացք ստանալ»⁴⁰⁾:

Բագուն փաստօրէն կտրուած էր արտաքին աշխարհէն՝ 1918 Յունուարէն սկսեալ: Քաղաքային իշխանութիւնը գործնապէս ձեռքն էր Բանուորական Խորհուրդին, ուր սկզբնապէս տիրապետող էին սոց.-յեղափոխականները, բայց որ հետզհետէ պիտի անցնէր պոլշեիկներու ազդեցութեան տակ: Դժուար էր յատկապէս հայոց կացութիւնը. թրքական թաղերու եւ գաւառական շրջաններու մէջ՝ անոնք ենթակայ էին ամէն տեսակ խժժութեանց եւ պարբերական սպանդներու: Հայոց Ազգ. Խորհուրդի⁴¹⁾ յանախակի դիմումները ազերի համապատասխան մարմիններուն եւ Մուսաւաթ կուսակցութեան կը մնային անհետեւանք: Եւրոպական ռազմաճակատէն Անդրկովկաս վերադարձող հայ զինուորները կուտակուած էին Բագու, անկարող՝ դէպի Հայաստան անցնելու: Հետզհետէ վտանգաւոր դարձող կացութեան առջեւ, Ազգային Խորհուրդը անոնցմէ կազմած էր կանոնաւոր գորամասեր՝ Համա-

գասպի ընդհանուր ղեկավարութեան տակ. աւելին, Ռոստոմի առաջարկով, Մարտի սկիզբը յայտարարուեցաւ զօրակոչ՝ բոլոր հայ տղամարդոց (մինչեւ 45 տարեկան)⁴²: Ապրիլին, հայկական ուժերու ընդհանուր թիւը կը հասներ 10էն 12 հազար զինեալի⁴³:

Հայոց Ազգային Խորհուրդն ու Հ. Յ. Դաշնակցութիւնը դրական չէզոքութիւն ցուցաբերեցին, երբ Մարտ 17ին կոնկրետ ընկերացան Բանուորական Խորհուրդի ուժերուն եւ Մուսաւաթ կուսակցութեան «Վայրի տիպիզմ»-ին միջեւ: Անոնք հաշտարար պատուիրակութիւններ ղրկեցին երկու կողմերուն, յանձն առին հայ ուժերով բաժնել կոտուղները եւ ազդու միջոցառումներով պաշտպանեցին իրենց ազդեցութեան տակ գտնուող թաղամասերու մահմետական բնակիչները: Առաջին այդ կոնկրետ վերջացան Մարտ 21ին, Մուսաւաթի պարտութեամբ: Ապա Բանուորական Խորհուրդը պատժիչ ջոկատներ ղրկեց նաեւ մերձակայ գաւառները (Շամախի, Կեօֆչայ), որոնք նոյնպէս ենթարկուեցան իր իշխանութեան: Իսկ Բագուի հայկական ուժերը յաջողութեամբ կասեցուցին լեռնական թաթարներու յառաջխաղացքը՝ Բագուի ուղիքներով⁴⁴:

Ապրիլին, պոլշեիկները եւ անոնց կազմած Ռազմա-յեղափոխական կոմիտէն փաստօրէն տէր դարձած էին քաղաքի կացութեան: Ճնշման տակ, Ազգային Խորհուրդը Ապրիլ 14ին ստիպուած եղաւ ընդունիլ անոնց պայմանները եւ իր բոլոր ուժերը դնել Ռազմա-յեղափոխական կոմիտէի տրամադրութեան տակ (գնդապետ Աւետիսեան կը նշանակուէր զօրքի ընդհանուր հրամանատար, բայց Համազասպ կը պահէր հայկական ուժերու ղեկավարութիւնը): Ապրիլ 25ին կազմուեցաւ Բագուի ժողովրդային կոմիտէներու Խորհուրդը (*Սովնարկոմ*)՝ Ստեփան Շահումեանի նախագահութեամբ, եւ իշխանութիւնը լրիւ կեդրոնացաւ պոլշեիկներու ձեռքը⁴⁵:

Թրքական բանակն ու ազերիները, Գանձակի շրջանին մէջ, տեղադրուեցին պատրաստութեան մէջ էին: Արագ նախադրուեցաւ մը, «Բագուի կոմունա»-ի ուժերը Յունիս 5ին հասան մինչեւ Կարամարգեան-Քիրտամիր-Չուպովա գիծը: Բայց թրքական նոր զօրաբաժին մը յառաջացաւ դէպի Կեօֆչայ, ուր Յունիս 27էն սկսեալ տեղի ունեցաւ բուռն ճակատամարտ մը: Թուրքերը նախ նահանջեցին, ապա դիմեցին ընդհանուր հակադարձակողականի: Յունիս 1ին, Բագուի ուժերը սկսան նահանջել: Գնդապետ Բիշերախովի ուժերուն Պարսկաստանէն վերադարձը պահ մը խանդավառեց Բագուի մարտիկները, բայց, հակառակ բուռն դիմադրութեան մը, նահանջը շարունակուեցաւ: Պարպուած շրջաններէն (Կեօֆչայ, Շամախի)՝ դէպի Բագու կը փախչէր նաեւ հայ բնակչութիւնը: Յունիսի վերջերքը թուրքերը մօտեցած էին քաղաքի արարձաններուն, մինչ գնդ. Բիշերախովի իր զօրամասով կը հեռանար դէպի Դերբենդ⁴⁶: Հակառակ Շահումեանի ընդդիմութեան, Բագուի բանուորներու, զինուորներու, նաւաստիներու եւ գիւղացիներու, ինչպէս նաեւ Ռազմա-յեղափոխական կոմիտէի ներկայացուցիչներու 27 Յունիսի արտակարգ ժողովը, գրեթէ միաձայնութեամբ, կ'որոշէր օգնութեան կոչ ուղղել Պարսկաստանի անգլիական ուժերուն: Դժգոհ՝ Սովնարկոմը մեկնումի պատրաստութիւններ տեսաւ, եւ Յունիս 30ի գիշերը պոլշեիկ ղեկավարներն ու կոտուղները, իրենց ընտանիքներով, միասին առնելով մեծաքանակ ռազմամթերք, պարէն եւ գումարներ, նաւ քարձրացան՝ Աստրախան անցնելու համար⁴⁷: Պոլշեիկներու դասալըժութեանէն ետք կազմուեցաւ «Բագուի տիգրթաթուրան»⁴⁸, որ փութաց արգիլել Սովնարկոմի եւ անոր ուժերուն փախուստը: Ճակատի պաշտպանութիւնը ամբողջովին ծանրացաւ հայ կոտուղներու եւ յատկապէս դաշնակցական մարտիկներու ուսերուն: Օգոստոսի սկիզբը, Հիւս. Կովկասէն կերպով մը Բագու հասնելով, կոտուղներուն միացան նաեւ Սեբաստացի Մուրատն ու Սեպուհը⁴⁹:

Օգոստոսի առաջին քանի մը օրերուն՝ հայերը կատաղօրէն պաշտպանեցին քաղաքը: Բագուն թրքական բանակի թնդանօթներու կրակին տակ էր արդէն: Ռոստոմ անձամբ դիրքէ դիրք կ'անցնէր՝ մարտիկները քաջալերելու համար: Հայոց կորուստները հարիւրներու կը հասնէին: Օգոստոս 5ին, ճակատի առաջին գիծերուն վրայ, նահատակուեցաւ Սեբաստացի Մուրատ⁵⁰: Այդ օրն իսկ սկսան հասնիլ Զօր. Տանսըրվիլի անգլիական ուժերը, խանդավառութիւն ստեղծելով անշուշտ ժողովուրդին մօտ, բայց փաստօրէն ոչինչ փոխելով ճակատի դրութեանէն⁵¹: Յաջորդող քանի մը շաբաթներուն ընթացքին, թուրքերը նոր յարձակողականի չդիմեցին:

Բայց օգնական թարմ ուժեր ստանալէ ետք, անոնք վերստին ընդհանուր գրոհի անցան Օգոստոսի վերջին օրերուն: Հայկական

հերոսական դիմադրութիւնը տեւեց մինչեւ Սեպտեմբեր 14- այդ օրը, մինչ թուրքերը նոր յարձակումով մը կը մտնէին քաղաք, անգլիացիները լեքցին իրենց դիրքերը եւ նաւ քարձրացան, մերժելով մնալ մէկ-երկու օր եւս՝ գէթ ժողովուրդին այլուր փոխադրութիւնը ապահովելու համար⁵²: Նոյն գիշերն ու յաջորդ առաւօտ, Բագուի հայ բնակիչներէն ու մարտիկներէն, ով որ կրցաւ, նաւ քարձրացաւ: Ճակատամարտը վերջացած էր: Վերջին նաւով, վերջին մեկնողը եղաւ Ռոստոմ, մոայլ ու հոգեպէս փլած⁵³:

Երեք օր շարունակ, ազերի ամբոխն ու թուրքերը կողոպտեցին, բռնաբարեցին ու ջարդեցին Բագու մնացած հայերը⁵⁴:

4) Հ. Յ. Դաշնակցութեան Ինքնորոգ Ընդհանուր Ժողովը. — 1917 Ապրիլին, Ռուսական Առաջին յեղափոխութեան ստեղծած ազատութեան ու խանդավառութեան պայմաններուն մէջ, գումարուած էր Կովկասեան եւ Երկրի մարմիններու Ռայոնական ժողով մը, որուն մասնակցած էին Երկրի 5 (Տարօն-Սասուն, Վասպուրական, Կարին, Բասեն եւ Բագրեւանդ) եւ Անդրկովկասի 7 (Բագու, Թիֆլիս, Երեւան, Ալեքսանդրապոլ, Գանձակ, Կարս եւ Պաթում-Սոչի) կեդր. Կոմիտէութեանց պատգամաւորներն ու Ղարաբաղի եւ Զանգեզուրի կոմիտէութեանց ներկայացուցիչները⁵⁵:

Հ. Յ. Դաշնակցութեան Ինքնորոգ Ընդհանուր Ժողովը — անկախ Հայաստանի մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած Դաշնակցութեան գերագոյն միակ համագումարը — կը բացուի 27 Սեպտեմբեր 1919ին եւ կը տեւէ ամբողջ Հոկտեմբեր ամիսը: Երկու Բիւրոներու (Հայաստանի եւ Արեւելեան Բիւրոներ) 1 Մարտ 1919ի շրջաբերականէն ի յայտ կու գար արդէն անոնց տրամադրութիւնը՝ ժողովին տալու ամենալայն ներկայացուցչական պատկեր ու յրատակօրէն համազգային բնոյթ⁵⁶: Մասնակցելու կը հրաւիրուէին բոլոր այն մարմինները, որոնք իրաւապէս գոյութիւն ունէին Ռիթերոգ Ընդհ. ժողովի օրերուն (1914), անոնք՝ որոնք կազմուած էին հնգամեակի ընթացքին (Բասեն, Բագրեւանդ, Հարք-Ապահունիք), ինչպէս նաեւ անոնք՝ որ կը բխէին Հայաստանի նոր իրականութենէն (Խորհրդարանական ֆրակցիա, Երեւանի Ներկայացուցչական Խորհուրդ եւն.): Արեւմտահայ մարմիններուն կը տրուէին յատուկ դիրքութիւններ՝ իրենց կազմերը ամբողջացնելու⁵⁷: Որոշումներու գրեթէ յիսնամեայ, ժողովին մասնակցած են վեռական ձայնով 61 պատգամաւորներ եւ խորհրդակցական ձայնով 19 հրաւիրեալներ⁵⁸:

Օրակարգը կը բաղկանայ հիմնական հինգ մասերէ. — ա) *Զեկուցում եւ հաշուետուութիւն* (Բիւրոներու, Կ. Կոմիտէներու եւն.): բ) *Քաղաքական եւ ընկերային հարցեր* (պետական Սահմանադրութիւն, Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականութիւն, բանակ, նախարարութիւններ, պարեմաւորում, ներգաղթ եւ վերաշինութիւն եւն.): գ) *Կազմակերպական խնդիրներ* (փոփոխութիւն Հ. Յ. Դ. նուազագոյն ծրագրի եւ կազմակերպական կանոններու, գաղութներ եւ անոնց կապը՝ երկրին հետ, կուսակցութեան տնտեսական կացութիւնը): դ) *Կուսակցական կեանք* (թանգարանի եւ արխիւներու հարց, հրատարակութիւններ, Հ. Յ. Դ. պատմութիւնը գրելու անհրաժեշտութիւն, կուսակցական դպրոց եւն.): ե) *Ընտրութիւն Հ. Յ. Դ Բիւրոյի*⁵⁹:

Օրակարգի պաշտօնական այս կէտերէն դուրս, Ընդհ. ժողովը գրադած է անշուշտ խորհրդապահական կարգ մը հարցերով, ինչպէս՝ թրքո-թաթար ապստամբ շրջաններու զսպումը, հայ գաղթականութեան վերաբնակեցումը⁶⁰, Մեծ Նդեռնի պատասխանատուներու պատուհասումը⁶¹ եւ այլն:

Յրդ Ընդհ. ժողովի Որոշումներու գրեթէ անոնց հերթին կու տայ *նուազագոյն ծրագրի փոփոխութեան* բանաձեւը, իրրեւ հիմնական անկիւնադարձ Դաշնակցութեան քաղաքական պահանջներուն մէջ⁶²: Դաշնակցութիւնը պաշտօնապէս ու վերջնականօրէն իրը կ'ընէր *Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի* ստեղծման նպատակը, երեսնամեակէ մը ի վեր իր ղեկավարած ազգային ազատագրական պայքարով նուիրագործուած⁶³: Անոր կը հետեւին Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականութեան, զօրքի, հանրային կրթութեան եւ տնտեսական քաղաքականութեան վերաբերեալ որոշումներն ու *հայացման բանաձեւը*⁶⁴: Քննադատութիւններ Բիւրոներու եւ անոնց անդամներու նախորդ հնգամեակի գործունէութեան մասին եւ նշում ընդհանուր եւ միակ վարձագծի մը պակասին⁶⁵: Բանաձեւ կամաւորական շարժման մասին⁶⁶: Կուսակցական կեանքի վերաբերեալ կարգ մը որոշումներէ ետք⁶⁷, Ընկերակցութեան հաւատարմութեան բանաձեւը՝ իրրեւ «*միջազգային ընկերակցական ընտանիքին հաւասար ու հարազատ անդամը*»⁶⁷: Հիմքեր՝ Պօղոս Նուպար փաշայի

պատուիրակութեան հետ բանակցելու համար⁶⁸): Ապա, վերջ դնելու համար տեղական եւ գաղթական մարմիններու նոյն վայրերուն մէջ գոյութեան յառաջացուցած կազմակերպական բանսին՝ «Ա) Թոյլ չտալ մի կեդր. կոմիտէի սահմաններում մի այլ կեդր. կոմիտէի գոյութիւնը. Բ) կեդր. կոմիտէի սահմանների մէջ եղած բոլոր կոմիտէները պիտի ենթարկուեն այդ շրջանի կեդր. կոմիտէին միայն»⁶⁹):

Ինչ կը վերաբերի Դաշնակցութեան կազմակերպական նոր կառոյցին, ան բնականաբար կը բխի նոր պայմաններէն, եւ կը համապատասխանէ պետութիւն դարձած Հայաստանի ապրող իրականութեան⁷⁰) (գիւղական, քաղաքային, գաւառակային, գաւառական, քաղաքային ու կեդրոնական մարմիններ եւ համապատասխան ժողովներ): Դաշնակցութիւնը կ'ունենայ մէկ Բիւրօ, որ «կուսակցութեան կենտրոնական գործադիր մարմինն է»⁷¹): Բիւրօյի անդամը չի կրնար միաժամանակ կառավարութեան անդամ ըլլալ: Բիւրօն վճռական հակակշիռ ունի Պորհրդարանի դաշնակցական ֆրակցիային եւ, անոր խողովակով, վարչապետի ու նախարարներու նշանակման եւ փոփոխման վրայ. ու կը շնչտուի, անգամ մը եւս, որ «կառավարութեան դաշնակցական անդամները միաժամանակ կուսակցական որեւէ մարմնի անդամ չեն կարող լինել»⁷²):

Կառոյցին մէջ նորութիւն է կոնֆերանսը (Պորհրդաժողով), որ կը հրաւիրուի Բիւրօյի անդամներու 2/3ին կամ առնուազն երեք 4. կոմիտէներու պահանջով՝ «Ընդհ. ժողովի կողմից չնախատեսուած հարցերի համար եւ նրա որոշումները պարտադիր են Բիւրօյի եւ բոլոր մարմինների համար»⁷³): Նորութիւն է նաեւ Գերագոյն Դատական Ատեանը՝ որ, ըստ իր կանոնադրային քննչութիւն⁷⁴), Խորհրդաժողովին հետ կը բաժնէ երբեմնի Դաշնակցութեան Պորհրդադիւն պարտականութիւններն ու իրաւունքները:

Դժբախտաբար, իններորդ Ընդհ. ժողովի նախագծած կազմակերպական այս նոր կառոյցը, իր կարգին, եւ մի'շտ հայ ժողովուրդի դաժան ցակատագրին բերումով, բաւարար ժամանակ պիտի չունենար լրիւ հաստատուելու եւ ամրապնդուելու⁷⁵): Քաղաքական անակնկալները նոր պայմաններ պիտի ստեղծէին շուտով, հնգամեակ մը եւս, հայութեան նորանոր դժբախտութիւններուն հետ, կազմալուծելու, ցրուելու կամ առնուազն հիմնական փոփոխութեան ենթարկելու համար Լ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական մեքենան:

5) Յարաբերութիւններ պոլիտիկաներուն հետ. Հայաստանի խորհրդայնացում. — Բագուի հերոսամարտը պոլիտիկ-դաշնակցական գործակցութեան պատմական միակ օրինակը չէ: Իրենց ընդլայնակայ գործունէութեան ընթացքին, համայնավար գանձանակները վայելած են օժանդակութիւնն ու պաշտպանութիւնը դաշնակցական գործիչներու եւ մարտիկներու: Ստեփան Շահումեանը անձամբ, երբ փախստական վիճակով ապաստանած էր Գանձակ, իր կեանքը կը վստահի դաշնակցական Հայկ Մելիքումեանին եւ անոր զինակներուն՝ որոնք, ապահով ցանապարհներով, զինք կը հասցնեն Թիֆլիս: Այնտեղ՝ ան գաղտնօրէն կը տեսնուէր Ռուբէն Տէր Միմասեանի եւ քժ. Յ. Ջաւրիեւի հետ, եւ միասին կը մշակուէր գործակցութեան գաղտնի ծրագիրը մը: Միեւնոյն օրերուն, Արամ Երեւանի մէջ կը բանակցէր Պօղոս Մակիմցեանի հետ. ապա, դարձեալ դաշնակցական մարտիկներու պաշտպանութեան տակ, գայն կը դրկէր Թիֆլիս՝ որպէսզի անցնէր Մոսկուա եւ Արամին բերէր պոլիտիկ կեդրոնական իշխանութեան տեսակետները: Միեւնոյն ծրագիրներու հետապնդման համար է, որ Ջաւրիեւ շուտով պիտի անցնէր Մոսկուա⁷⁶): «Բանակցութեանց եւ գործակցութեանց հետեւանքներից մին այն եղաւ, — կը գրէ Ռուբէն, — որ զխաւորապէս Ջաւրիեւի ջանքերով եւ Շահումեանի շնորհիւ, դուրս եկաւ Լենինի հռչակաւոր դեկրետը Միացեալ Հայաստանի անկախութեան մասին»⁷⁷): 1919ին, Երեւան, դաշնակցական ղեկավարները կապի մէջ էին համայնավար Արշալիր Մելիքեանի հետ, որ իր կարգին Մոսկուա մեկնեցաւ՝ Դաշնակցութեան կարգ մը մտահոգութիւններն ու առաջարկները պարզելու համար այնտեղ: Դժբախտաբար, Մակիմցեանին նման, ան եւս չվերադարձաւ⁷⁸):

Կարճ միջեւ 1920ի առաջին ամիսները, պոլիտիկաները, որոնք հալածուած էին Վրաստանի մեծշնչակներուն եւ Ատրպէյ-ճանի Մուսաւաթին կողմէ, ազատօրէն կը շրջագայէին եւ կը գործէին «դաշնակցական» Հայաստանի մէջ: Անոնցմէ ոմանք, ինչպէս Ս. Կասեանը, Ա. Մուսեանը, Ս. Նանոյեանը, Ա. Նուրիջանեանը եւ ուրիշներ կ'ապաստանէին Հայաստան, ուր երբեմն կը վարէին

նաեւ պատասխանատու պաշտօններ պետական կամ հասարակական հիմնարկութիւններու մէջ⁷⁹):

Կացութիւնը փոխուեցաւ, երբ, ի խնդիր «Համաշխարհային Յեղափոխութեան», Մոսկուայի վարիչները սկսան սիրաբանի քննարկական Թուրքիոյ հետ, Կարմիր Բանակը իջաւ Անդրկովկաս եւ Ատրպէյճանը խորհրդայնացաւ: Մենք ծանօթ ենք 1920 Յունւարին Թիֆլիս կայացած գաղտնի տեսակցութեան՝ Լ. Յ. Դ. Բիւրօյի անդամներու եւ Լ. Նազարեթեանի միջեւ եւ այս վերջինի չոր ու հեզմական պատասխաններուն²⁷): Աւելնալով հետախուզական կարգ մը տուեալներու վրայ, Հայաստանի մէջ կատարուած խորհրդակցութիւններ եւ ձերբակալութիւններ եկան փաստելու որ «բոլշեւիկները պատրաստուած են Հայաստանում ընդհանուր ապստամբութիւն, այդ նպատակով արտասահմանից ստացել էին խոշոր գումարներ եւ ձեռնարկել էին մարտական խմբերի կազմակերպութեան»⁸⁰): Ապա ծանօթ ենք նաեւ Մայիսին կայացած պոլիտիկան ապստամբութեան փորձին եւ անոր զսպումին՝ Բիւրօ-կառավարութեան կողմէ:

Յատկապէս Ատրպէյճանի խորհրդայնացումէն ետք (28 Ապրիլ 1920), պոլիտիկ-քննարկական դաւը, Հայաստանի նկատմամբ, դարձաւ անլի բացայայտ: Շատ անլի սուր կերպով բան առաջ, Ատրպէյճանի Կոմկուսի ղեկավար մարմինը, որուն մաս կը կազմէր Ան. Միկոյեան, Կարմիր Բանակի միաւորներու թէ Հայաստանի իր գործակալներուն միջոցաւ, սկսաւ Հայաստանը նեղել Ղարաբաղի, Ջանգեզուրի ու Շարուր-Նախիջեւանի հարցերով եւ ներքին անկայունացման ճիգերով: Վերջնագիրներ, սպառնալիքներ, զինուորական միջամտութիւններ կը յաջորդէին իրարու: Համաքուրանական շարժման ամէնէն կարկառուն դէմքերը եւ հայ ժողովուրդի ջարդարարներէն շատեր կը հաւաքուէին Բագու⁸¹):

Ճարահատ, Հայաստանի կառավարութիւնը անգամ մը եւս ուզեց ուղղակի խօսակցիլ Մոսկուայի հետ: Մայիսին, Մոսկուա մեկնեցաւ Լեւոն Շանթէ, Լ. Տէրտէրեանէ եւ Լ. Ջաւրիքեանէ բաղկացած պատուիրակութիւն մը, բանակցութեանց ձեռնարկելու եւ Խորհրդային Ռուսաստանի կողմէ անկախ Հայաստանի ցանաչումն ու, գէթ սկզբունքով, Թրքահայաստանի վրայ անոր ունեցած իրաւունքի հաստատումը ապահովելու պարտականութեամբ⁸²): Բայց հայ եւ ազգերի պոլիտիկաներու ստապատիր հակաբարոյչութիւնն ու էնթրիկները ձախողեցուցին Հայաստանի համար ա'յնքան կարեւոր ուս-հայկական բարեկամութեան դաշնագրի ստորագրութիւնը՝ որ կայանալու վրայ էր Յունիսի կէսերուն: Յունիս 1ին, Չիչերին հեռագրով առաջարկեց Հայաստանի կառավարութեան՝ բանակցութիւնները շարունակել Երեւան⁸³):

Լրկրանի 47 հոգիները պատուիրակութիւնը Երեւան հասաւ Հոկտեմբեր 11ին եւ ընդունուեցաւ մեծ պատիւներով: Այդ թուականին, Հայաստանի կառավարութեան եւ Փարիզի հայկական պատուիրակութեանց ջանքերով՝ արդէն իսկ իրականացած էր Միացեալ եւ Անկախ Հայաստանի միջազգային ցանաչումը, Սեւրի դաշնագրի ստորագրութեամբ (10 Օգոստոս 1920): Միւս կողմէ, սակայն, Սեպտեմբեր 23ին սկսած էր հայ-թրքական աղիտալի պատերազմը՝ Ջօր. Քեազիմ Քարապէֆի թանակներու ընդհանուր եւ անակնկալ յարձակումով: Լրկրանի առաջարկը՝ Սեւրի դաշնագրէն հրաժարելու, մերժուեցաւ: Կազմուեցաւ դաշնագրի նախագիծ մը, ըստ որուն Խորհրդային Ռուսաստանը պիտի ցանաչար Հայաստանի անկախութիւնը (Ջանգեզուրը ներառեալ) եւ միջնորդի դեր պիտի կատարէր հայ-թրքական պատերազմը կասեցնելու ուղղութեամբ. անոր իրաւարարութեամբ պիտի լուծուէին նաեւ հայ-ատրպէյճանական հողային վէճերը: Բայց Լրկրան անակնկալ կերպով Բագու մեկնեցաւ ու, անգամ մը եւս, հայ-ռուս դաշնագիրը չստորագրուեցաւ⁸⁴):

ՉՄՈՒՆԱՆՔ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐԸ
ՆՈՒԻՐԵԼՈՎ ԻՐԵՆՑ
ՆՐԱՇԻԱՏ ՈՍԿԵՂԷՆ ՄԸ

TYCOON
JEWELLERY
Պուրճ Համուտ, Սանթր Պլանֆօ, հեռ. 266367:

Հակառակ հայ բանակային կարգ մը միաւորներու ցուցաբերած յամառ ու հերոսական դիմադրութեան, հայ-թրքական պատերազմը պիտի վերջանար Հայաստանի պարտութեամբ⁸⁵⁾: Հոկտեմբեր 30ին Կարսը ինկաւ եւ Նոյեմբեր 7ին՝ Ալեքսանդրապոլը⁸⁶⁾: Նոյեմբեր 23ին, մինչ Ալ. Խատիսեանի գլխաւորած պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլ կը մեկնէր թուրքերուն հետ հաշտութեան բանակցութեան սկսելու համար, Բիւրօ-կառավարութիւնը հրաժարական ներկայացուց⁸⁷⁾. վարչապետ նշանակուեցաւ Ս. Վրացեան՝ որ կազմեց խառն դաշինք մը: Անմիջական ու հրամայական հարց էր՝ ամէն գնով համաձայնիլ ռուսերուն հետ, Քարապետի առողջ պայմաններէն ազատելու համար ինչ որ տակաւին կարելի էր փրկել Հանրապետութեան հողային տարածքէն ու անոր ժողովուրդէն: Եւ 2 Դեկտեմբերին, քանի մը ժամի տարբերութեամբ, Դրօ եւ Հ. Տէրտերեան Լըկրանի հետ կը ստորագրէին Հայաստանի խորհրդայնացման համաձայնագիրը, եւ Խատիսեանի պատուիրակութիւնը, թուրքերուն հետ՝ Ալեքսանդրապոլի դաշնագիրը⁸⁸⁾: Լեւոն Ստոյանով իր «Մեծ դաշնակիցներէն», եմբակայ թուրքերու եւ պոլշեիկներու համադրուած դաւերուն, Հայաստանի անկախ Հանրապետութիւնը վերջ կը գտնէր:

6) *Յեղկոմի կարճատեւ իշխանութիւնը եւ Փետրուարեան ապստամբութիւնը*. — Արիւնաբար եւ սպառած, թրքական նոր արհաւիրքներու սարսափը սրտին, Հայաստանի ժողովուրդը ոչ անշուշտ խանդավառութեամբ, բայց որոշ սփոփանքով դիմադրեց խորհրդային կարգերու հաստատումը երկրին մէջ: Պոլշեիկ կամ ոչ, եկողները հայեր էին ի վերջոյ. եւ մանաւանդ՝ անոնց ետին կար «խաչապաշտ ռուսը», որ գուցէ պիտի կարենար վերջնական ու դրական կերպով լուծել հայ-թրքական եւ հայ-ատրպէյեանական վեճերը ու խաղաղութիւն բերել Հայաստանին⁸⁹⁾: Հ. Յ. Դ. Բիւրոն, 1 Դեկտեմբերի իր նիստին մէջ, որոշած էր որ իր անդամները, ինչպէս նաեւ կուսակցական թէ պետական կարկառուն դեմքեր, անցնին արտասահման, բացի վարչապետ Սիմոն Վրացեանէն, որ պիտի մնար՝ անհրաժեշտ փոխանցումները կատարելու համար երկրի նոր վարիչներուն. իսկ Հայաստանի դաշնակցականներուն թելադրուեցաւ նոր իշխանութեան նկատմամբ ունենալ օրինապահ քաղաքացիի կեցուածք⁹⁰⁾: Խորհրդայնացման համաձայնագիրը կը տրամադրէր, որ նոր իշխանութեան մէջ (Յեղկոմ) առնուէին երկու «ձախ» դաշնակցականներ եւ որ, իրենց նախկին կեցուածքներուն ու արարքներուն համար, հալածանքի չենթարկուէին դաշնակցականները, սոց.-յեղափոխականները, սոց.-դեմոկրատները եւ բանակայինները⁹¹⁾:

Բայց, Ս. Կասեանի Յեղկոմի⁹²⁾ Երեւան հասնելէն ետք (4 Դեկտեմբեր), Դրոն չէզոքացուեցաւ եւ ստորագրուած համաձայնագիրը փաստօրէն դարձաւ մեռելաբեր⁹³⁾: 6 Դեկտեմբերին կազմուած Չեկան անյապաղ ձեռնարկեց ձեռքարկութիւններու: Վրաստան անցնելու նախքան վրայ ձեռքարկուեցան Համօ Օհանջանեան, Արտ. Զիլինգարեան (Դարբինեան), Վահան Նաւասարդեան, Բ. Յ. Տէր Դաւթեան, Վ. Բարսեղեան եւ ուրիշներ: Աւելի ուշ՝ բանտ նետուեցան խմբ. Համազասպ, Խորհրդարանի նախագահ Ա. Սահակեան, Ա. Աստուածատրեան, Բ. Իշխանեան, Յովհ. Քաջազնունի, Մ. Մուսիսեան, Լեւոն Շանթ, Նիկ. Աղբալեան եւ շատ ուրիշներ: Յունուար 10ին Ռուսաստան աքսորուեցաւ Դրոն, իսկ Յունուար 24ին՝ սպարապետ Թ. Նազարբեգեան, Սարգարապատի հերոսամարտի ղեկավար Զօր. Սիլիկեան, գորավարներ Հախվերտեան, Խամագեան եւ 1200 հայ սպաներ, հետիոտն, տարուեցան անյայտ ուղղութեամբ⁹⁴⁾: Իսկ քնակարանի, կարասիներու, անձնական ինչքերու, հագուստի եւ ուտեստեղէնի բոլոր նագրաւումները առօրեայ իրողութիւններ էին⁹⁵⁾: Իսկ հողավեճներու մարզին մէջ՝ ոչ Ղարաբաղը⁹⁶⁾, ոչ ալ Նախիջեւանը եմթարկուեցան Հայաստանին: Հայաստանը թուրքիայէն բաժնող սահմանագիծը, եթէ չհաշուենք հետագայ շատ մասնակի փոփոխութիւններ, մնաց այն՝ ինչ որ կը տրամադրէր Ալեքսանդրապոլի դաշնագիրը. դաշնագիր՝ գոր չեղեալ նկատելու ամէն տուեալ ունէին պոլշեիկները, քանի ան ստորագրուած էր Հայաստանի անկախ Հանրապետութեան ներկայացուցիչներուն կողմէ եւ խորհրդայնացման *ակտ*էն ետք⁹⁷⁾:

Ճիշդ պիտի չըլլար հաւանօրէն Յեղկոմի խժոժութիւնները վերագրել, բացառապէս, Կասեանի, Ալիս Նուրիջանեանի կամ Աթարբեգեանի մը պարագայական ու անմիտ վայրագութիւններուն: Հայաստանի խորհրդայնացումը քաղաքացիական կռուիքովէն անցնելու տրամադրութիւնը երեւան կու գայ օրուան պոլշեիկ վարիչներու գաղափար արտայայտութիւններուն մէջ: Դեկտեմբեր 2ին տեղի ունեցած էր իշխանութեան խաղաղ փոխան-

ցում, առանց արիւնահեղութեան, եւ այդ՝ խորհրդային կարգերու հաստատման օրինաչափ եղանակ չէր...⁹⁸⁾:

Եւ այդ իմաստով, Յեղկոմը յաջողեցաւ: Հայաստանի ժողովուրդը, մանաւանդ գիւղացիութիւնը, չհանդուրժեց բռնակալական այդ համատարած *ռէժիմ*ը: Շշմած տեղի ունեցող անցուդարձներէն՝ Արագածի, Բաշ-Գեառնիի, Կոտայքի եւ այլ շրջաններու ժողովրդային ուժերը նախընտրած էին արդէն՝ զինաթափ չըլլալ, հակառակ Վրացեանի, Դրոյի եւ դաշնակցական ուրիշ ղեկավարներու օրինապահութեան կոչներուն⁹⁹⁾: Սպաններու աքսորէն ետք, յատկապէս, ինչ մը բոլոր շրջաններուն մէջ կազմուեցան գաղտնի խմբակներ՝ տեղական «փրկութեան կոմիտե»ներ, նպատակ ունենալով ժողովուրդի եւ անոր ինչքերու պաշտպանութիւնը: Ընդհանուր ցասումի առիթ տալով, ապստամբութեան անմիջական պատճառը հանդիսացան Փետրուար 9-10էն սկսող գաղափարաբանութեան ձեռնարկները: Ս. Վրացեան, Ա. Յովհաննէսեան, Յ. Տէվէնեան, Ե. Սարգսեան, Յ. Տէր Յակոբեան եւ Հայաստան մնացած դաշնակցական այլ ղեկավարներ այդ օրերէն սկսեալ դարձան ընդդատակեայ: Կազմուեցաւ «Հայրենիքի Փլըկութեան կոմիտե»՝ Վրացեանի գլխաւորութեամբ¹⁰⁰⁾:

Ապստամբութիւնը ծայր կու տայ Փետրուար 16ի գիշերը, երբ Արագածի ձիաւոր խումբերը, Սասունցի Մուշեղի ընդհանուր ղեկավարութեամբ, կը գրաւեն Էջմիածինն ու Աշտարակը, բանտերէն ազատելով բազմահարիւր կալանաւորներ¹⁰¹⁾: Գրեթէ միաժամանակ, կը շարժին Փարաքարի (Ասլան), Ելենովկայի (Հայրիկեան), Ախտայի (Փիլոս), Բաշ-Գեառնիի (Խնկո) եւ Կոտայքի (Մարտիրոս եւ Կուրո) ժողովրդային ուժերը¹⁰²⁾, ազատագրելով համապատասխան շրջանները: Բոլոր կողմերէն, Երեւանի վրայ ընդհանուր գրոհը կը սկսի Փետրուար 18ի լուսաբացին: Յեղկոմի ուժերը կը դիմադրեն, բայց տեղի կու տան գնդապետ Կուրո Թարխանեանի եւ բաշգեառնեցի Մարտիրոսի զինակներու վճռական յարձակումներուն դիմաց եւ կը փախչին դէպի Շարուր-Նախիջեւան¹⁰³⁾: Երեւանի բանտի գրաւումով թէեւ շատ մը մտաւորականներ ու պետական դեմքեր ազատուեցան (Օհանջանեան, Քաջազնունի, Լեւոն Շանթ, Ա. Սահակեան, Ն. Աղբալեան, Ա. Աստուածատրեան եւն.), բայց յայտնի դարձաւ՝ որ, Փետր. 17էն 18 լուսցող գիշերուան ընթացքին, Ալիս Նուրիջանեանի հրահանգով եւ անձնական մասնակցութեամբ, Չեկան ուղղակի սպանդ կազմակերպած է այնտեղ՝ հրացանագրկ ու կացինահար ընելով կարեւոր թիւով պետական եւ կուսակցական գործիչներ (որոնց կարգին՝ Բագուի «կոմունա»յի հայկական ուժերու հրամանատար, Ասկերանի երբեմնի հերոս Համազասպ Սրուանձտեանը)¹⁰⁴⁾:

Այնուհետեւ, որոշ լրացումներով, «Հայրենիքի Փրկութեան կոմիտե»ն վերածուեցաւ նոր կառավարութեան, որ շուրջ մէկուկէս ամիս վարեց ազատագրուած հայրենիքի գործերը¹⁰⁵⁾: Հայաստանը դարձաւ առանձին էր բոլորովին. ու կառավարութեան բոլոր կոչերը, ուղղուած եւրոպական պետութեանց՝ օժանդակութեան խնդրանքով, Մոսկուայի՝ հասկացողութեան ակնկալութեամբ եւ Հայաստանի սահմանակից երկրներուն՝ բարի դրացնութեան կապերու առաջարկով, մնացին «ձայն բարբառոյ յանապատի»¹⁰⁶⁾: Յատկապէս Վրաստանի խորհրդայնացումէն ետք (25 Փետր. 1921), Հայաստանը մեկուսացած էր լրիւ: Եւ Յեղկոմի ուժերը հարաւ-արեւմուտէն (Շարուր-Նախիջեւան), ու Կարմիր Բանակի կանոնաւոր զօրամասերը արեւելէն եւ հիւսիսէն, ռազմական առօրեայ գործողութիւններով, ճիգ կ'ընէին վերագրաւելու ազատագրուած շրջանները: Մինչեւ Ապրիլի սկիզբները, բուն կռիւներ տեղի ունեցան Ղամարու (Արտաշատ), Ջանգիրասար, Ախտա, Սուխոյ Ֆոնտան եւ այլուր¹⁰⁷⁾: Ապրիլ 2ին, մինչ կառավարութեան անդամներն ու ժողովրդային ուժերը կ'անցնէին դէպի Ջանգեզուր (ուր, Գ. Նժդեհի սպարապետութեամբ, կազմուած էր հայկական ինքնավար իշխանութիւն), Կարմիր Բանակը կը վերագրաւէր Երեւանը¹⁰⁸⁾:

Փետրուարեան ապստամբութեան շօշափելի հետեւանմաններէն մէկը եղաւ նաեւ այն՝ որ, Լեւոնի իսկ խորհուրդով, նոր Յեղկոմը, Ալ. Միսանիկեանի գլխաւորութեամբ, Հայաստանի ժողովուրդին նկատմամբ ցուցաբերեց շատ անելի գուսպ ու հաւասարակշռուած վարմունք¹⁰⁹⁾:

7) *Լեւոն Հայաստանի գոյամարտը*. — Պոլշեիկները, 1920 Յուլիսին, Ղարաբաղէն մտեր էին Ջանգեզուր: Հոկտեմբերին, ժողովրդային ապստամբութիւնը կը պայթի այնտեղ՝ երկու տարբեր կէտերէ, — Պողոս Տէր Դաւթեանի զինակները կ'ազատագրեն Սիսիանի շրջանը (հիւսիս), իսկ Գարեգին Նժդեհի ուժերը՝ Ղափանն ու յարակից գաւառակները (հարաւ): Պոլշեիկները Աստըր-

պէջնանէն կը բերեն բանակային թարմ ուժեր (որոնց կը միանան Բագուէն Նախիջեան անցնող 1-200 թուրք զինուորներ) և կատարուին կը կոտորեն Ջանգեզուրի ժողովուրդն ու կ'աւերեն գիւղերը: Բայց ժողովրդային դիմադրութիւնը շուտով կը տարածուի բովանդակ Ջանգեզուրին և ապստամբ ուժերը Տաթևի մէջ կը միանան իրարու: Բուռն ու յաճախ գիրկընդխառն կռիւներէ ետք (որոնց ընթացքին կը նահատակուի Պ. Տէր Դաւթեան), Նոյեմբերի վերջերը ամբողջ Ջանգեզուրը ազատագրուած է արդէն¹¹⁰:

Դեկտեմբեր 25ին, մինչ չայաստանի միւս շրջաններուն մէջ խորհրդային իշխանութիւնը հաստատուած էր արդէն, տեղի կ'ունենայ Համագնգեզուրեան Ա. Համագումարը՝ որ «Ինքնավար Սիւնիք»ի սահմանադիր ժողովի բնօրէն կը ստանայ: Կ'ընտրուի կառավարութիւն, թէև «սպարապետ» Գ. Նժդեհ, մինչև Ջանգեզուրի անկումը, փաստօրէն կը հանդիսանայ երկրի գերագոյն պետը¹¹¹: Պոլշեիկները բազմիցս կը փորձեն մերթ համոզումի, մերթ սպառնալիքի նամբով, խաբէութեամբ թէ իրաւախոհութեան փորձերով, վերջ տալ զանգեզուրեան շարժման և վերատիրանալ նահանգին՝ որուն անկախ դրութիւնը պատուար մը կը բաշխէ իրենց և Նախիջեանի թուրքերուն միջև¹¹²: Իբրև պատասխան այդ բոլորին, Նժդեհի ուժերը 1921 Փետրուարին կը գրաւեն Դարալագեազի շրջանը ևս և զայն կը կցեն Ինքնավար Սիւնիքին, որ այնուհետև կը կոչուի «Անկախ Լեռնահայաստան»¹¹³:

Ապրիլին, Դարալագեազէն անցնելով, Ջանգեզուր կը հասնին Հայաստանի ժողովրդային ուժերն ու անոնց ընկերացող պետական և հասարակական գործիչները: Ոմանք Արաբսի վրայով ուղղակի կ'անցնին Պարսկաստան՝ ուրիշներ, յատկապէս զօրքը, կը մնան Լեռնահայաստան՝ տեղւոյն կառավարութեան տրամադրութեան տակ: Ապրիլի վերջերը Տաթևի մէջ տեղի կ'ունենայ Լեռնահայաստանի Բ. Համագումարը՝ որ կ'ընտրէ նոր կառավարութիւն՝ գլխաւորութեամբ Դարեգին Նժդեհի: Համագումարը կ'որոշէ պոլշեիկներու դէմ պայքարը շարունակելու՝ մինչև Հայաստանի ամբողջական ազատագրումը¹¹⁴:

Հայաստանի խորհրդային իշխանութիւնը դարձեալ կը փորձէ խաղաղ միջոցներով վերատիրանալ Ջանգեզուրին՝ հոն դրկելով, Լեռնահայաստանի կառավարութեան հետ բանակցելու համար, Յեղկոմի անդամ Արտաշէս Կարինեանը և կարմիր բանակային սպայ մը: Բանակցութիւնները կ'անցնին ապարդիւս¹¹⁵:

Ազատութեան և անկախութեան համար մղուող հերոսական, վեհ, բայց անյոյս պայքար մըն էր զանգեզուրցիներունը: Բանակցութիւններու ձախողութենէն ետք կռիւները վերսկսան, մինչ արտասահմանէն Պարսկաստանի վրայով ֆաղաֆական կամ գինական օժանդակութիւն ստանալու բոլոր փորձերը կը մնային անհետեւանք: Լեռնահայաստանի ֆաշարի մարտիկները մաքառեցան մինչև վերջին փամփուշտը: Յուլիսի 10ին, կառավարութեան անդամները, ազատատենչ մտաւորականութիւնը և վերջին կրտսողները, իրենց կարգին, անցան հիւրընկալ Պարսկաստան¹¹⁶: Պոլշեիկեան բռնակալութեան դէմ հայկական ազատամարտի վերջին փուլը կ'աւարտէր:

Հ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

1) Հայաստանի Հանրապետութեան պատմութեան նուիրումը հիմնական աշխատութիւններ են՝ Սիմոն Վրացեանի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»ը (տեսնել բ. տիպ, Պէյրուս, 1958) և Ալեքսանդր Խատիսեանի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ» (բ. տիպ, Պէյրուս, 1968, Համագոյնի հրատարակութիւն): Կորթոզական գործ է նաև Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի «THE REPUBLIC OF ARMENIA» շարքը, որուն Գ. հատորը ցարդ լոյս տեսած չէ (տեսնել՝ Ա. հատոր, «The First Year, 1918-1919», University of California Press L.A. 1971 և Բ. հատոր, «From Versailles to London, 1919-1920», նոյն, 1982):

2) Յովհաննէս Քաջազնունիի վարչապետութեան մասին՝ տեսնել Ս. Վրացեան, յիշ. աշխ., էջ 177-253, և յատկապէս՝ Ռ. Յովհաննիսեան, նոյն, Ա. հատոր, առաջին 12 գլուխները: Ժողովրդականները մերժած ըլլալով կառավարութեան մաս կազմել, Քաջազնունի նախ յառաջացուց գրեթէ զուտ դաշնակցական դահլիճ մը, որուն մէջ ներքին գործոց նախարար էր Արամ Մանուկեան. վերջինի մահէն ետք (մեռաւ Երեւան, բժար տիֆէ, 29 Յունուար 1919ին), այդ նախարարութիւնը ստանձնեց, մինչև նոր կառավարութեան կազմութիւնը, Ալ. Խատիսեան: Հոկտեմբեր 1918ին, Քաջազնունի փոփոխութեանց ենթարկած էր իր դահլիճը, առնելով ժողովրդական նախարարներ եւս (քալիսիոնի կառավարութիւն):

3) Տեսնել Ալ. Խատիսեան, յիշ. աշխ., էջ 133-193, նաև Ռ. Յովհաննիսեան, նոյն, Բ. հատորը՝ ամբողջ: 1919 Յունիսին, քալիսիոնի խզումէն ետք, Խատիսեան իր կարգին կազմեց գրեթէ բացառապէս դաշնակցականներէ բաղկացած դահլիճ մը, կառավարական պաշտօնի կոչելով նաև Բիւրոյի անդամներ՝ ինչպէս Ս. Վրացեան, Ա. Գիլիսանդանեան, Ա. Ջամալեան և Ռ. Տէր Միմասեան, կուսակցութիւն-կառավարութիւն երկուստեան յառաջացուցած ներքին անախորժ հակատրամադրութիւնները վերացնելու կամ նուազագոյնի իջեցնելու մտահոգութեամբ:

4) Համո Օհանջանեանի Բիւրո-կառավարութեան գործունէութեան, և յատկապէս 1920ի պոլշեիկեան և թուրք-թաթարական ըմբոստութիւններու զսպումին կ'անդրադառնանք տակաւին: 1920 Մայիս-Հոկտեմբեր ամիսներու ժամանակաշրջանին մասին՝ տեսնել Ս. Վրացեան, նոյն, էջ 378-485: Նաև Ա. Խատիսեան, նոյն, էջ 195-221: Բիւրո-կառավարութեան կազմն էր՝ Վարչապետ և արտ. գործոց նախարար Համո Օհանջանեան, ներքին և զինուորական՝ Ռուբէն Տէր Միմասեան, եղեմտական՝ Աբրահամ Գիլիսանդանեան, հաղորդակցութեան՝ Արշակ Ջամալեան, աշխատանքի և գիւղատնտեսութեան՝ Սիմոն Վրացեան, հանրային կրթութեան՝ Գեորգ Ղազարեան, խնամատարութեան՝ Սարգիս Արարատեան: Այս կազմը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ 1919 Սեպտեմբերին Ինքնորոշ Ընդհ. ժողովին կողմէ ընտրուած Հ.Յ.Գ. Բիւրոն, որ պետական գործին կը լծուէր հակառակ Ընդհանուր ժողովի յստակ որոշման («Կառավարութեան դաշնակցական անդամները միաժամանակ կուսակցական որեւէ մարմնի անդամ չեն կարող լինել»), ձեռնարկելու համար վտանգուած հայրենիքի փրկութեան աշխատանքներուն:

5) Տեսնել Ս. Վրացեան, նոյն, էջ 486-507: Նաև Ա. Խատիսեան, նոյն, էջ 299-326: Միեւնոյն իր գործին մէջ, Խատիսեան Հայաստանի յաջորդական կառավարութիւններն ու անոնց գործունէութիւնը կը բնութագրէ հետեւեալ ձևով.— «Առաջին շրջանը — կառավարութիւնը՝ նախագահութեամբ Քաջազնունիի — պետական կազմակերպչական էր. երկրորդ շրջանը — Ալ. Խատիսեանի նախագահութեամբ եղած կառավարութիւնը — քաղաքացիական-ստեղծագործական, և երրորդ շրջանը — Հ. Օհանջանեանի և Ս. Վրացեանի նախագահած կառավարութիւնները — արտաքին և ներքին թշնամիներու հետ կռուի շրջան, որ վերջացաւ Դեկտեմբեր 2ին, Թուրքիայի հետ Ալեքսանդրապոլի դաշնագրով և իշխանութիւնը մեծամասնականներուն յանձնուեցաւ: (էջ 133):

6) Ս. Վրացեան, նոյն, էջ 182. Ռիչըրտ Յովհաննիսեան, նոյն, Ա. հատոր, էջ 42:

7) Ս. Վրացեան, նոյն, էջ 278. Ռիչ. Յովհաննիսեան, նոյն, Ա. հատոր, էջ 473:

8) Անկախ 4 վարչապետներէն, Հայաստանի Հանրապետութեան հիմնադրման ու ձեւաւորման մէջ կարեւոր դեր ունեցան դաշնակցական ղեկավար այլ դէմքեր, ինչպէս՝ Արամ Մանուկեան, Խաչատուր Կարճիկեան (որ եղբայրասպան գնդակի զոհ գնաց 14 նոյեմբեր 1918ին), Աւետիք Սահակեան կամ Հայր Աբրահամ (որ օրէնսդիր ժողովի նախագահն էր), Սիրական Տիգրանեան, Դրաստամատ Կանայեան կամ Դրո, Սարգիս Մանասեան, Աբրահամ Գիլիսանդանեան, Սահակ Թորոսեան, Վահան Խորէնի, Արտաշէս Բարալեան, Նիկոլ Աղբալեան, Արշակ Ջամալեան, Սարգիս Արարատեան, ևն., յիշելու համար գլխաւորները միայն:

9) Արտաքին յարաբերութեանց և դիւանագիտական մարզերուն մէջ եւս հիմնական դեր ունեցան դաշնակցական ղեկավարներ. յատկապէս Աւետիս Ահարոնեան՝ որ, իբրև Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ, Հայաստանը կը ներկայացնէր Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեան (Պողոս Նուպար փաշայի) և յաղթական դաշնակիցներուն մօտ: Փարիզի մէջ, անոր հետ գործակցեցան Յ. Քաջազնունի, Ա. Խատիսեան (իրենց վարչապետութեան շրջանները բոլորելէ ետք) և Հ. Օհանջանեան (նախքան վարչապետութեան կոչուիլը): Մուտրոսի դաշնագրէն առաջ, Օհանջանեան դիւանագիտական աշխատանք տարած է նաև Գերմանիոյ մէջ: Հանրապետութեան ճանաչման ի խընդիր, Մոսկուայի մէջ սովետ կառավարութեան հետ բանակցած են Յակոբ Ջարեան, Լիպարիտ Նազարեանց և Արտաշէս Զիլինգիրեան (Ռուբէն Դարբինեան). առաջին երկուքը նոյնիսկ ձերբակալուեցան սովետներուն կողմէ և բանտ մնացին (քայքայուած առողջութեամբ, Ջարեան մահացաւ բանտէն արձակուելէ ետք՝ 1920 Մարտին): Լեւոն Ծանթ սկզբնապէս կը մասնակցէր Հ. Հ. Պատուիրակութեան աշխատանքներուն, Փարիզ. 1920ի աշնան, երբ թրքական և պոլշեիկեան յարձակումները վտանգած էին Հանրապետութեան գոյութիւնը և պետք